ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 3 1956

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԱՍԻՄԻԼՅԱՑՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ[1]

Ծանր է եղել հայ ժողովրդի վիճակը 16—18-րդ դարերի պարսից տիրապետության շրջանում։ Հայ աշխատավորությունը ոչ միայն ենթարկվում էր տնտեսական և սոցիալական անտանելի ճնշման ու հարստահարման, այլև նրա նկատմամբ կիրառվում էր դաժան ազգային և կրոնական հալածանքների հետևողական քաղաքականություն։

Այդ հալածանքների գլխավոր նպատակն էր բռնի կերպով հավատափոխ անել, ձուլել և ի վերջո վերջնականապես ասիմիլյացիայի ենթարկել բոլոր ազգային փոքրամասնություններին և հատկապես քրիստոնյա ու այլադավան ժողովուրդներին։

Հայտնի է, որ հայերի, վրացիների և մյուս այլադավան ժողովուրդների ասիմիլյացիան 16—18-րդ դարերում տեղի էր ունենում հավատափոխության եղանակով, և դա միանգամայն հասկանալի էր։ Ֆեոդալական հասարակարգում, ինչպես այդ մասին գրում է Էնգելսը, «եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակ մնում էր աստվածաբանության խնամակալության տակ։ Մտավոր գործունեության բոլոր բնագավառների վրա տարածվող աստվածաբանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»[2]։

Հասկանալի է, որ Էնգելսի այս դրույթը հավասարապես վերաբերում է նաև իսլամական աշխարհին, որտեղ պետական-քաղաքական վարքագիծը խստորեն ենթարկվում էր Ղուրանի դոգմաներին և շարիաթի օրենքներին։ Սեֆյան Իրանում կրոնական անհանդուրժողականության ձևով արտահայտվող ասիմիլյացիայի քաղաքականությունը վարվում էր շիիզմի դրոշի տակ, որի գլխավոր ոգեշնչողները շիա բարձրաստիճան հոգևորականներ էին։

Պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Սարկավագի, Գրիգոր Դարանաղցու և ուրիշների երկերում բազմաթիվ հիշատակություններ կան բռնի հավատափոխության և այդ պատճառով տեղի ունեցած նահատակության փաստերի մասին։ Հանուն հավատի կատարվող նահատակության

---

[1] Զեկուցված է Մատենադարանի VII գիտական սեսիային, 1954 թ. դեկտեմբերի 29-ին։

[2] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 46։